# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 43-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ողջունում ու շնորհավորում ենք Ձեզ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի երջանիկ առթիվ: Հայցում ենք Աստծուց խաղաղություն և ստեղծագործ աշխատանքի նոր թափ մեր մեծ ու հզոր Երկրին, այլև բարօրություն և երջանիկ կյանք սովետական բազմազգ ժողովուրդներին:

Հարգանօք՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի երջանիկ առթիվ, հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքներն ու սրտաբուխ մաղթանքները: Աղոթում ենք առ Աստված մեր հզոր Երկրի անշեղ վերելքի, սովետական եղբայրական ժողովուրդների բարօրության համար՝ խաղաղության և ստեղծագործ աշխատանքի պայմաններում:

Սիրով և ողջունիվ՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ Ա. ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ հաճեցեք, խնդրեմ, ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Սովետական հզոր Միության հետագա ծաղկման, ինչպես և սովե-

տական ժողովրդի բարօրության համար՝ ամբողջ աշխարհում կայուն խաղաղության պայմաններում:

Սիրով և ողջունիվ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սրտագին շնորհավորում ենք Ձեզ և պատվարժան խորհրդի բոլոր անդամներին՝ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի երջանիկ առթիվ: Աղոթում ենք ու մաղթում, որ Աստված հաստատ պահի Սովետական հզոր Միությունը և բարօրություն ու երջանկություն պարգևի սովետական բազմազգ ժողովրդին: Խաղաղությո՜ւն, խաղաղությո՜ւն ամենեցուն:

Սիրով և ողջունիվ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր շնորհավորանքի և բարեմաղթութեան համար:

**ԱՌՈՒՇԱՆՅԱ՛Ն**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

---

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեր ողջույնների և ջերմ բարեմաղթությունների համար՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ:

**Ա. ՔՈՉԻՆՅԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

---

Հաճեցեք ընդունել իմ և Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամների շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 43-րդ տարեդարձի առթիվ Ձեր եղած շնորհավորանքի համար:

**Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ